

# ՀԱՅ ՄԱՎԵՆԻՑ

ՊԱՏՏՈՒԹԵՐԹ  
Բ.Ս.Ը.Ս. Ի  
հիմնվել 1918 ին



ORGANE  
DES SCOUTS ARMÉNIENS  
FONDE EN 1918



## "ՀԱՅ SCOUT"

Գ. ՏԱՐԻ ՄԱՍ 1930

№ 5

MARS 1930 (3<sup>e</sup> année)



### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՑԵԻՆ

(ՏԵՍ ՄԻԿՍ ԷՋԸ)

ՀԱՏԸ 3 ՖՐԱՆՔ



# ՀԱՅ ՍԿԱՈՒՏ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱՔԵՐՔ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա, Սուրիա, Յունաստան, Պուլկարիա, Ռումանիա . . . 35 ֆրանք  
Միւս երկիրներ . . . . . 2 տոլար

### ՀԱՏԸ 3 ՖՐԱՆՔ

(ՎԵՑԱՄԱՆԱՅ ԶՈՒՆԻՆՔ)

Պարզ նամակ, յողուած, նկար, թերթ, գիրք, եւլն. ղրկել ձիշդ հետեւեալ հասցեով  
Revue HAI-SCOUT, U. G. Arménienne  
1, Rue Saulnier, Paris (9°)

Դրան, ավանդակաւ նամակ, չէք, մանտախոսող ղրկել գանձապետին հետեւեալ  
հասցեով  
M. H. Zahrédjian, 53 Faub. Montmartre, Paris (9°)

Հ. Մ. Ը. Մ. ի ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ հասցէն է՝  
U. G. Arménienne de Culture Physique et de Scoutisme  
1, Rue Saulnier, Paris (9°), 5րդ յարկ. մէթրո Cadet.

### ԿԱՐԵՒՈՐ

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ Հ. Մ. Ը. Մ. ի բոլոր շրջաններէն եւ Մասնաճիւղերէն.

1. Իրենց որոշ հասցէն ղրկել մեզ անյապազ:
2. Իրենց գործունէութեան մասին օրը օրին թղթակցութիւններ եւ տեղեկութիւններ ղրկել կարճ ու ամփոփ եւ ընթեռնելի գիրով, մասնաւորապէս օտար եւ յատուկ անունները որոշ գրել:
3. Սկաուտականը եւ մարզականը զատ թուղթերու վրայ գրել, առանց իրար խառնելու: Նկարներուն տակ յատակ գրել բացատրութիւնները:
4. Տեղեկացնել քանի օրինակ թերթ կ'ուզուի եւ սպառուծի համար պատասխանատու անձ մը ցուցնել, եւ աւելցած թիւերը ղրկել մեզի:

### ԶԵԿՈՅՑ

Հ. Մ. Ը. Մ. ի Ամերիկայի եւ Ֆրանսայի շրջաններէն կը խնդրուի կանոնաւոր կերպով տեղեակ պահել թերթիս վարչութիւնը, ֆրենց գործունէութեան մասին, ղրկելով գրութիւններ եւ նկար:



# ՀԱՅ ՍԿԱՆՈՒՏ

ՊԱՆՏՕՆԱԹԵՐԹ

Բ.Ս.Ը.Ս.Ի

ԳԻՄՆԵԱԼ 1918 ԻԼ



ORGANE

DES SCOUTS ARMÉNIENS

FONDÉ EN 1918

## "ՄԱՐՏՍԻ" SCOUT

Գ. ՏՄԻԻ

ԹԻԻ 5

ՄԱՐՏ 1930

### ԳԵՂԵՑԻԿ ՆՊԱՏԱԿ՝ ՍԽԱԼ ԶԱՄԲՈՎ

Եռանդուն շարժում մը սկսած է վերջերս, բոլոր հայ գաղութներու մէջ:

Իրարու ետեւէ հրապարակ կուզան հայ պատմական և աշխարհագրական անուններով կնքուած մարզական և սկաուտական միութիւններ:

Առէք ոեւէ հայ թերթ, դուք հոն կը հանդիպիք Արարատ, Մասիս, Արաքս, Շիրակ, Վահագն, Տորք, Կայծ, Շանթ, Կամք, Արի, Եռանդ, Արծիւ մէկը միւսէն պաշտելի անուններով մկրտուած միութիւններու, որոնք բոլորն ալ կը հետապնդեն ՆՈՅՆ ՆՊԱՏԱԿԸ՝ ՄԻԵԻՆՈՅՆ ԾՐԱԳԻՐՈՎ, այսինքն՝ տալ հայ պատանին՝ շիտակ եւ ամուր նկարագիր, եղբայրութեան եւ համերաշխութեան ոգի, առողջ մարմին զիմարելու համար այլասերումի եւ ֆիզիքական անկումի... ԲՈՂՈՐՆ ԱԼ Հ. Մ. Ը. Մ. Ի ԳԱԻԱՆԱՆԻ:


Անոնք ունին իրենց ժողովները, վարչութիւնները, և նոյնիսկ իրենց մամուլը՝ ընդամէնը տասնեակ մը անդամներու համար:

Մէկ ակնարկով, գեղեցիկ ու յուսադրիչ երեւոյթ...

Եւ սակայն, երբ մօտէն քննենք և լուրջ ախտաճանաչումի ենթարկենք այս գեղեցիկ պիտակներու տակ ապաստանած կազմակերպութիւնները, երեւան կուզայ անջատօրէն եւ ինքն իր գլխուն գործելու, իրար չեզոքացնելու եւ անհատական տենչանքի յագուրդ տալու ցաւալի մտայնութիւն մը:

Երեւոյթը նոյնն էր ասկէ տասնեակ մը տարիներ առաջ Պոլսոյ և գաւառներու մէջ, երբ բարգաւաճ հայութիւն մը կ'ապրէր իր հողին վրայ իր երդիքին տակ:

Հագիւ դուրս եկած ահաւոր պատերազմէն որ քիչ մնացած խաչ քաշէր հայութեան վրայէն, խումբ մը անձնուէր երիտասարդներ՝ հիմը մամուլկրթական եւ սկաուտական ընդհ. միութեան մը՝ Հ. Մ. Ը. Մ. Ի ԳԱԻԱՆԱՆԱՆԻ անունով եւ միացնելով բոլոր անջատ կազմակերպութիւնները:



321-2000

3182-47



Շարժումը ճանապարհի մը պէս տարածեցաւ Պոլսէն մինչեւ Հայաստան, մինչեւ հեռաւոր Ամերիկայ, մտաւ դպրոցներէն ու որբանոցներէն ներս, համախմբելով բոլորը, իր գեղեցիկ նշանաբանին՝ ԲԱՐՁՐԱՅԻՐ-ԲԱՐՁՐԱՅՈՒՐ ի տակ, որ այսօր, բեւեռային աստղի մը պէս կը փայլի աշխարհի հինգ մասերուն մէջ ցրիւ եկած հայ երիտասարդներու լամբակին վրայ:

Մեր նպատակը չէ Հ. Մ. Ը. Մ. ի պատմականը ընել հոս, Ան՝ ամէնուն ծանօթ է արդէն, իբր ազգային գոյութեան խարխախներէն մին: Հոս մատնանշել կ'ուզենք անջատօրէն գործելու ախտը, որ պառակտելով հայ երիտասարդութիւնը, հարուած կուտայ համախումբ գործունէութեան:

Հ. Մ. Ը. Մ. ը գերազանցապէս ազգային կազմակերպութիւն մըն է: Անոր մտահոգութեան հիմը չի կազմեր այն պարագան թէ՛ իր խումբերը յաղթանակ կը տանի՞ն օտար խումբերու դէմ, թէ՛ գնահատուած և իրենց գոյութիւնը վաւերացուցած են օտարէն... , այլ նկատի կ'առնէ թէ հայ պատանին կը մարդկ՞ իր հոգին ու մարմինը, դուրս կուգա՞յ լծացումէ, իր ղեկներնորուն նիզը լարած է արտաքին ու ներքին վտանգներու դէմ, իր կուրծքը զինած է հիւանդութեան և հիւժումի դէմ... :

Ի՞նչ արժէք կը ներկայացնէ այն երիտասարդը կամ պատանին երբ իր Միութեան անունով շահած յաղթանակներէն շլացած կը լքէ իր ազգային Մ'րութիւնը և կ'անցնի օտարին կողմը, կամ օտար շքանշանով պճնուած՝ ինքնահաւան և արհամարհոտ կը կանգնի դէմը:

Մեր պատմութիւնը, տխուր դասագիրք մըն է օտարէն կրած մեր յուսախարութիւններուն և օտար շլացնելէն կրած վնասներուն:

Լաւ պէտք է գիտնալ որ, ազգի մը գոյութիւնը և ապրելու իրաւունքը նախ ազգը ինքն է որ կը վաւերացնէ, ազգը ինքն է իր ճակատագրին տէրը: Ամէնէն կարեւորն է գիտակից համերաշխութիւնը, ուժ և իրաւունք է ան, վաւերացումն է մեր գոյութեան:

Օրինակ թող չտրուի մեզի օտարներու անջատ գործունէութիւնը: Մեզի պէս փոքրաթիւ, ցիրուցան, կառավարական հսկողութենէ զուրկ ազգի մը համար բոլորովին տարբեր է պարագան: Օտարները քաղաքացիական դատարակութիւն և պետական հսկողութիւնը ունին իրենց վրայ որ կրնայ վտանգը սահմանափակել և կարգի հրաւիրել համազգային շահը ոտնակոխողները. իսկ մեր մէջ, երբ սկսի գործել անհատականութիւնն ու ԵՍը, ոչ մէկ օրէնք կը ճանչնայ, մինչեւ որ փլցնէ նոյնիսկ ամենագեղեցիկ և օգտակար գործը... :

«Ուժտուն մարզիկներ ունինք, պէտք է աշակցիք մեզի... պէտք է կազմենք Հայ Ընդհ. Մարմնակրթական Միութիւն մը...»

«... Որոշ է, Հ. Մ. Ը. Մ. ը իր նպատակն ունի, եւ այնքան սեղմած է զայն, որուն միւսները չեն կրնար հաղորդակից ըլլալ, կարծես կը վախնայ թէ կը գողնան իրմէ...» (Կայծակ, Եգիպտոս):

Ուժտուն երիտասարդներ, ընդհանուր ճակատէն բաժնուած՝ ուժտուն բազուկներ... կազմելու համար Ընդհանուր Միութիւն մը որ արդէն իսկ գոյութիւն ունի, և անոր նպատակը ծանօթ է բոլորին, նոյնիսկ օտարներուն. իսկ ինչ կը վերաբերի զայն «սեղմած» ըլլալու եւ «գողցուելու վախ»ին, երեւակայական է և միտքերը պղտորելու միայն կը ծառայէ:



Ըսէ՛ք, ինչ լուրջ նկատում կամ հանրային շահ կը տեսնէք անջատօրէն գործելու մէջ. ըսէ՛ք, համոզեցէ՛ք մեզ ալ...

Մի՛ աշխատիք ատաղձ փրցնել սա գեղակերտ շէնքէն՝ Հ. Մ. Ը. Մ. էն, շինելու համար ձեր անձնական փառքի խրճիթը:

Դուք այսպէս անջատելով ու քանդելով համախումբ գործունէութիւն մը, ամենամեծ ծառայութիւնը մատուցած կ'ըլլաք մեր ցեղային թշնամիին, և անոր պակաս թողած գործը լրացնելու կ'աջակցիք:

Թողէ՛ք, հայ պատմութիւնը, գոնէ մէկ անգամ, համերաշխութեան էջ մը արձանագրէ:

Իաց է Հ. Մ. Ը. Մ. ի դուռը բոլորին համար, յստակ է ծրագիրն ու նպատակը, բերէ՛ք ձեր «ութսուն»ները Հ. Մ. Ը. Մ. ի մէջ անոր շատ մը ութսունները ստուարացնելու համար, բերէ՛ք ձեր առաջարկները յստակ և տրամաբանական ձեւով, գլուխ գլխի տանք և կերտենք ամուր պատուանդան մը՝ որուն վրայ թող կանգնի սա ազգին ապագայ յոյսը եղող երիտասարդութիւնը:

Նպատակին գեղեցկութիւնը արժէ՛ք չունի, եթէ համախումբ և ուղիղ ճամբով չի քալենք անոր հասնելու համար:

Ձեր «Շանթ»երն ու «կայծ»երը, «կամք»ն ու «Եռանդ»ը, «Վահագն»ներն ու «Արի»ները, «Մասիս»ն ու «Արարատ»ը, «Արաքս»ը, «Տորք»ն ու «Տիտան»ը բերէ՛ք Հ. Մ. Ը. Մ. ի մէջ. ալ աւելի ուժեղացուցէ՛ք զայն, ձեր բոլորին տեղը հո՛ն է, հոն է գործին մեծութիւնը և երիտասարդութեան փրկութիւնը, որովհետև անոր առաջին բառը կը սկսի ՀԱՅՈՎ և կը վերջանայ ՄԻՈՒԹԻԻՆՈՎ:

ՀԱՅ ՍԿԱՍՈՒՏ



Շայ սկաուտները թնութեան ծոցին մէջ:



### ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

Իմ բարի ընկերներս

«ՀԱՅ ՍԿԱՌԻՏ» ը վերհրատարակելու Ձեր ջանքերը զիս շատ սգեւորեց:

Խորունկ հաճոյքով կ'իմացնեմ որ՝ Հ. Մ. Բ. Մ. ի ծիպն եզրագոտի մէջ զրամ անխար-դախ եւ հարազատ հիմերը կը բաւեն որ՝ Հ. Մ. Բ. Մ. եան նոր աշխարհ ծը ստեղծուի, եւ անոր էն ծաքուր ապրած օրերու ներ-շնչուծովը: . . .

Յուզուծ բառը կարծեմ բիչ անգամ կ'արգարացնէ իր իմաստն որքան Ձեր հեռուի մտերիծը զայն ապրեցաւ պահ ծը՝ կար-գալով այն կեանքոտ սողերն որոնք կ'աւետէ-յին Փարիզի փոքրօզի մեծութեան մէջ՝ Հ. Մ. Բ. Մ. եան հին սիրելիներուդ յանկարծական սլացքը դէպի պարտականութեան գլուխը:

Հաւատքով ուժեղ ձեռքերու խնամած այդ ծառին, դեռահաս պտուղներէն ոմանց՝ փչող հովերէն խորշակահար իշնալու ցաւին հետ, լաւագոյն մխիթարանքի պատեհութիւն մ'ալ կ'ունենանք: Պիտի ըսեմ՝ թերեւս փոթորկին հարուածներուն կը պարտինք հին պարտիզ-պաններուն ուշադրութիւնը՝ դէպի Հ. Մ. Բ. Մ. ի գործը ձեռք առնելը:

Բարոյական շաղախով բարձրացած տա-ճարը չի փլչիր, դարերու ու բարքերու ցրն-ցումներ առ առաւելն բարիք կ'ընեն մատ-նանշելու, շինութեան պահուն ծածկ մնացած սկար անկիւնները: Հաւատարիմ ձեռքերու օրհնաբեր ձիգ ծը . . . եւ ան՝ պիտի ապրի յաւետ: Եւ դուք մի՛շտ ապրիք, սիրելի եղ-բայրներ . . . :

ՀԱՅԿ Ն. ՃԻՉՄԷՃԵԱՆ

Գահիրէ

ԱՌԱՋՆՈՐԿՆԵՐ՝, դուք խմբակներուն հո-գին էք, դուք էք որ կրնաք ձեր խմբակին խրաքանչիւր սղան ուսումնասիրել, տեսնել անոր պակասները եւ անոնցմէ հասցնել լրա-կան սկառաներ: Եթէ ձեր խմբակէն մի բա-նի հոգի միայն կարողներ հասցնէք իսկ միւս-ները մնան սկար, արժէք չունի. Ասով ցոյց կուտաք ձեր անկարողութիւնը:

Գուք պէտք է լաւ օրինակ ըլլաք անսնց, որ իրենք ալ ձեզի հետեւին:

Գործը աւելի ազդեցիկ է քան խօսքը:

Գ. ՅԱԿՈՅԵԱՆ

### Ա Ր Շ Ա Ի

20 ՓԵՏՐՈՒՆՍՐ.— Փարիզի եւ ծոսակայ արուարձաններու 7 մասնաճիւղները, սկառաւ եւ գայլիկներուն 8 խումբերը փետրուար 20 ին կատարեցին ընդհանուր արշաւ ծը:

Պա՛ւ՛ւ՛, ի՛նչ ցուրտ օդ: Սակայն բազրը կը ժպտի սկառաններուն, հակառակ ցուրտին՝ արեւ եւ կապուց երկինք: Փարիզի ընդերկրեայ երկաթուղիի խումբներէն խումբ խումբ հայ սկառաններ զուրս կազան, բեռնաւորուած ի-րենց ուտելիքներով եւ գոյքերով, ժպտադէմ եւ կարգապահ, կարճեւ, երէկուան տխուր եւ կո-րաքամակ այդ հայ մանկիկները, ըմբռնած են թէ՛ իրենք վաղը Հայաստանի սիւները պիտի ըլլան եւ թօթափած են բռնութեան դրոշմած սեւ կնիքը իրենց վրայէն:

Վերջապէս կը հասնինք Invalide ի Pont-Mirabeau կայարանը եւ անկէ՛ մօտ 120 սկառաւ եւ գայլիկներ երկաթուղիով կ'ուղղուինք դէպի Մէտտոն, հոն պարենաւորուծը ամբող-ջացնելով, կը բարձրանանք դէպի՝ Մասիս պի-տի ըսէի, այնքան տարուած ենք Արարատով կամ Մասիսով . . . : Այո՛, կը բարձրանանք Ob-servatoire ի բարձունքը եւ կը յառաջանանք սկառաւական գնացքով, կը հասնինք Patte D'oise, սկառաւական արշաւներու եւ բանա-կուծի յարմարագոյն վայրերէն մին: Մեր ստա-ցած հրահանգին համաձայն, վրանները դար-նելով, կը սկսինք գործի: Մինչեւ կէս օր գա-սախօսութիւն, մարդանք եւ պզտիկ խաղերէ վերջ՝ ճաշի փողին ձայնը կը լսուի, կը բու-լորուինք ճաշին շուրջ եւ մեծ ախորժակով կը ճաշենք: Ժամը մինչեւ երկու հանգիստ, որմէ վերջ անհամբերութեամբ սպասուած պաշարու-ղական մեծ խաղին փողը կը հնչէ: Մեծերս եր-կու խումբերու կը բաժնուինք, իսկ պզտիկները թէթեւ խաղով կը զբաղին: Սկառաւապետի գա-տաւորութեամբ պաշարողական խաղը կը սկսի:

Խաղը աւարտեցաւ մէկ կողմին պարտու-թեամբը, սակայն բոլորս ալ սկառաւաբար, գոհ սրտով իրար շնորհաւորելէ վերջ, երգերով սկսանք բանակուծը վերցնել եւ ուրախ-զուարթ, ու մէկ շաքաթուան օդի պաշարով վերադար-ձանք մեր տուները:

Փարիզ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՂՋԵՐՈՒ



### ՄԻՇՏ ՕԳՆԵԼ ՈՒՐԻՇԻՆ

Սկառուտական դաւանանքին ամենակարեւոր հատուածներէն ծին է, ՄԻՇՏ ՕԳՆԵԼ ՈՒՐԻՇԻՆ: Այս հատուածին ուրիշ ձեւի ձեւն է բարիք Մը Գործել Ամէն օր: Ու ամէն սկառուտ իւր փողկապին կապը ամօթով պէտք է բակէ երեկոյեան, եթէ չէ կրցած, հոգ չէ թէ շատ պզտիկ օգնութիւն ճը հասցնել իր նմաններուն աչդ օրուան ընթացքին:

Գիտե՛ճ, շատ ճը սկառուտներ կ'անճճրկին, իրենք իրենց հարցնելով, «Բայց ի՞նչ բարիք գործե՛ճ, ո՞ւրիկէ գտե՛ճ բարիք ճը գործելու առիթը ամէն օր, ստեղծե՛ճ զայն»:

Հաւանաբար այսպէս խորհող տղաք ուրիշին օգնել, կամ բարիք ճը գործել ըսելով կը հասկնան հերոսային արարքներ, օրինակ ձեւ կը ծախուրնէ ապատել իր անճը վտանգելով:

Ո՛չ, սիրելի սկառուտներ, պէտք չէ ինքզինքնիդ չարչրկէք աչդ անսակ հագուազիւտ պարագաներ փնտուելով: Բարիք ճը գործելու առիթը ամէն ճարդու առօրեայ կեանքին ձե՛ջ կը ներկայանայ, և ձեր կարճածէն շատ աւելի յաճախ: Կը բաւէ որ դիտէք ձեր շուրջը և ամէն անգամ առիթ ճը ներկայանալուն օգտուիք ձեր պարտականութիւնը ի գործ դնելու համար:

Կարողացէ՛ք անդլիացի քանի ճը սկառուտներու յուշատետրէն քաղուած հետեւեալ արարքները, և պիտի տեսնէք որ գուք ալ կըրնաք անիկէ աւելին կամ այլքան ճը բարիք գործել կամ օգտակար ըլլալ ամէն օր:

Աւելի վերջը, բարիք գործելը ձեզի համար սովորութիւն ճը պիտի դառնայ, այնպէս որ դիւրաւ պիտի կրնաք ճե՛ճ ճառաջութիւններ ճատուցանել ձեր նմաններուն:

Անգլիացի սկառուտ մը կը գրէ. — «Յգնեցի մօրս խոնանոցը մաքրելու և կերակուր պատրաստելու համար»:

Ուրիշ օր մը. — «Մեր՝ մարդ մը ճանը ճրար մը կը տանէր, օգնեցի իրեն, ու երբ ուզեց դրամով վարձատրել զիս մերժեցի: — Որովհետեւ սկառուտները իրենց բարի գործերը դրամով չեն ճախեր»:

Գարձեալ ուրիշ սկառուտ մը կը գրէ. — «Պրզտիկ տղայ մը փողոցը վար ինկաւ, վերցուցի զայն և Թաչկինակովս վրայի ցեխերը մաքրե-

ցի: Մօրս համար կրակ վառեցի, և պատուհանները սրբեցի»:

Ուրիշ մը. — «Կոյր մարդու մը ձեռքէն բրանեցի փողոցին միւս կողմը անցնելու համար»: Եւ յիշու, եւ յիշու:

Կը տեսնէք սիրելի սկառուտներ որ ինչ պարզ է բարիք ճը գործել կամ ու է ձեւիւն օգնել: Օն ուրե՛ճն յառա՛ջ, բարի նախանճն ունեցէք լեցնելու ձեր տեսարակները բարի գործերով, իւրարու հետ ճրցելով:

ՆԵՐ ԱՔԼՈՐ



### “ԿԱՅՏ” ԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

(Ա.Գ.ՋԻԿ ՍԿԱՌՈՒՏՆԵՐ)

Հայ աղջիկներն ալ իրենց օտար քոյրերուն նման զգացին սկառուտութեան պէտքը և բաւական վարանելէ վերջ, քանի ճը համակիր օրիորդներ ճե՛ճ եռանդով ճը ձեռնարկեցին կազմութեան:

Հայ կայտերու (աղջիկ սկառուտ) Փարիզի շարժումը կանոնաւորապէս սկսաւ 1929 հոկտեմբեր ամսուն ձե՛ջ, և այսօր Փարիզի ձե՛ջ, 30ի ճօտ կայտերէ կը բաղկանայ ան:

### Ի՞նչ է ՀԱՅ ԿԱՅՏԵՐՈՒ ՆՊԵՏՆԿԸ

Հաճելի պարագաներու ձե՛ջ զարգացնել պզտիկ աղջիկները հոգիով և ճարճնով ու պատարաստել առաքելնի ճայրեր, որ օգտակար պիտի դառնան իրենց ազգին:

Հայ կայտութիւնը ուրիշ բան չէ, այլ բուն սկառուտութիւնն է: Հոս պէտք է ըսել որ ամէն կայտ հայ, լեզուին պէտքը զգալով, կ'աշխատի զանազան ճիջոցներով գրել-կարդալ սորվիլ:

Հայ կայտը, առողջութեան, լաւ տրա-



ճաղրութեան և գեղեցիկի զգացուճը կը հետապնդէ:

Բացօղեայ կեանքը, արշաւները, բանակումները ոչ ճիշտն կը պատրաստեն կատարեալ բնութեանատէր կիներ այլ և զանանք կը դարձնեն քաջ, ճկուն, զիմացկուն, ճարպիկ և զուարթ:

Անոնք զխտեն զխտել և հիանալ բնութեան վրայ, և աստուածային գործին վրայ զմայլիլ և գնահատել Անոր ստեղծագործութիւնը:

**ՔՈՅՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՅԸ**

Միեւնոյն համազգեստին ներքեւ սկառտական ընտանիքի բոլոր անդամները, առանց ընկերական կարգի խտրութեան, կը սովորին հաստատակամութիւն, և զայն կը գործադրեն հաւաքականութեան գեղեցիկ գաղափարին համար:

Մեծ ուժ կ'ուտանք քոչրասիրութեան, հաստատակամութեան և այս նպատակին համար Անկէնի խումբը ընտրած է իրեն իբր խորհրդանիշ **ՄԵՂՈՒՆ**:

**ԿԱՄՔ, ԱՇԽԱՏԱՆՔ, ՄԻՈՒԹԻՒՆ**

Կամք և աշխատանք իրօք հայ ազգին երկու գլխաւոր առարկնութիւններն են, բայց որքան ցանկալի պիտի ըլլար եթէ ամէնքս ալ կարենայինք խոկապէս «Միութիւն» բառին իմաստին թափանցել. Հայ կայտերը կը ջանան և կ'աշխատին այս կէտը զարգացնել իրենց ձեռք: Սակայն նուազ արժէք պիտի ունենային կամքը, Աշխատանքը և Միութիւնը, եթէ զուարթութիւնը չը տիրէր ձեր ձեռք:

Հայ կայտութիւնը կը փափաքի ջնջել հայ ազգին ժառանգական տխուր գէճը՝ զայն փոխարինելով ժպիտով:

Կայտեր ջանանք որ ժպիտը նշանաբան դառնայ ձեզի, ինչպէս ձեր ֆրանսացի *Eclairieuse* քոչրերուն:

Հայ ծայրեր, առանց վարանելու զրկեցէք ձեր աղջիկները ձեզի և վտահ էղէք որ ձեր յոյսը ապարդիւն չպիտի մնայ:

Մ. Ժ. (S. P.)

Փարիզ

S. ԸՆՔԱՊԱՊԵԱՆ

Ի. Խ. — Վերի գրութիւնը ուշադրութեան կը

յանձնենք հայ ծնողներուն, Հ. Մ. Ը. Մ. միայն տղոց կազմակերպութիւնով չ'զբաղիր այլ և. ձեռք առած է աղջիկ-սկառտներու. (Կայտին) գործն ալ և. զայն յանձնած է Սր. Ընքապապեանի, որ արդէն ֆրանսական խումբի մը խմբապետուցին է: Սրիորդը եռանդուն կերպով փարած է գործին և ներկայիս կազմակերպած է Անկէնի, Ռոնի և Պուա-Քոլոմպի Մասնաճիւղերը: Մտա ատենէն պիտի կազմակերպուին ուրիշ շրջաններ և.ս: Սրիորդին սկառտական մակդիրն է ֆրանսական խումբին մէջ S. P. (*Sourire Perpetuel*) հայերէն կը նշանակէ «Մըրչումսպիտ»:

**ՆԱՄԱԿ ԾՆՈՂՔՆԵՐՈՒՆ**

Առիթը եկած է որ, ձեր ուշադրութեան յանձնեմ կարգ մը կէտեր մեր ստանձնած գործին յաջողութեանը համար. ինչու որ, վարիչներուս կողմէ եղած ամէն զոհողութիւն և աշխատանք մեծ օգուտ մը չեն տար եթէ դուք ծնողքներդ չ'օժանդակէք մեզի. ծնողք մը ամէն բան կրնայ ընել, եթէ ուզէ, և պէտք է որ ուզէ իր իսկ զաւկին բարիքին համար:

Ամէն բանէ առաջ, պարտականութեան զիտակցութիւնը ամուր հիմ մը պէտք է ունենայ ձեր տղուն մէջ, պէտք է զիտանայ թէ այսինչ պարտականութիւնները ունի կատարելիք, և պէտք է կատարէ. եթէ ինք թերանայ — քանի որ պատանի է — այդ պարագային մանաւանդ ձեր կողմէն եղած ամէն թելադրանք, վստահ եղէք թէ իր բարբարար ազդեցութիւնը կ'ունենայ և օր մը կը դառնայ անջնջելի սովորութիւն, որ անհրաժեշտ է իր ապագայ կեանքին համար:

Թէպէտ իրեն արգիլուած է սկառտական հազուստ կրել խմբական հաւաքոյթներէ դուրս, բայց և այնպէս կրնայ ըլլալ որ անտեսէ այս օրէնքը, պիտի խնդրեմ որ դուք ալ ձեր կողմէն հսկէք այդ ուղղութեամբ: Ասկէ դատ, բացի բանաւոր պատճառէ, պէտք չէ բացակայի հաւաքոյթներէ, արշաւներէ. և դուք պէտք է բժախնդիր ըլլաք այս մասին և միշտ զգացնէք իրեն իր պարտականութիւնը: Ջանացէք որ իր ժամադրութիւնը յարգէ, որոշուած տեղը



### ՌՌՄԱՆԻԱ

## ՆՕՔԵՐ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՍ

փետր. 1930

Եւ որոշուած ժամուն ներկայ գտնուի: Պիտի խնդրեմ որ՝ այն պարագային, երբ արգարացուցիչ պատճառներով չի պիտի կրնայ մասնակցիլ մեր հաւաքոյթներուն, ձեր կողմէ ստորագրուած երկտող մը կարելի ընէք ուղարկել առաջնորդին կամ խմբապետին հասցէին:

Ահա կարգ մը գլխաւոր կէտեր որ փափաքեցայ յանձնել ձեր ուշադրութեան, որպէսզի այդ ուղղութեամբ ձեր աշխատանքով աջակցիք մեզի՝ նպատակին կարենալ հասնելու համար:

Եւ այսպէս պարբերաբար, պիտի ստանաք գրութիւններ, որոնց մէջ պիտի պարզեմ Ձեզ այն ուղղութիւնը, զոր ընդգրկած ենք մենք, կարենալ գլուխ հանելու համար այս դժուարին գործը: Այդ գրութիւններուն մէջ, պիտի գտնէք նաեւ ընդհանուր դիժերու մէջ բացատրուած այն որոշ թերութիւնները եւ միեւնոյն ժամանակ առաւելութիւնները, զոր առիթը պիտի ունենամ հետզհետէ տեսնել ձեր դաւկին վրայ: Պիտի խնդրեմ որ այն հրահանգները զոր կը տրուին իրեն, կէտ առ կէտ կատարէ ընտանեկան յարկէն ներս, ձեր ծնողական հսկողութեան տակ, եւ միեւնոյն ժամանակ պարբերաբար ձենէ ստանամ գրութիւններ, որոնց մէջ դուք մասնանշէք այն կեանքը զոր ձեր գաւակը կ'ապրի ընտանիքին մէջ, իր ընթացքը՝ ծնողքին հանդէպ, պարտականութեանց զիտակցութիւնը ու թերացումը, հնազանդութեան ոգին, և վերջապէս այն ամէն բարոյական առաւելութիւնները եւ թերութիւնները զոր դուք կը նշմարէք ձեր գաւակին վրայ:

Եթէ հաստատ համոզումով մըն է որ յանձնած էք ձեր գաւակը Հ. Մ. Բ. Մ. ի սկառուական շարքերուն, ուրեմն, պէտք է աջակցիք մեզի և նոյնքան բծախնդիր ըլլաք, որքան մենք՝ մեր ստանձնած պարտականութեան հանդէպ:

ՍԿԱՌԻՏ ԽՄԲԱՊԵՏՐ

Առաւօտուն կանուխ, ստքերս կ'ուղղեմ անդգալարար Հ. Մ. Բ. Մ. ի ահու՛մբը: Դուռը կը բանամ և սրահին խորը լոյս մը կը նշմարեմ բեմին վրայ: Կամաց մը կը մօտենամ բեմին և վարագոյրին ծալքէն հիացումով կը դիտեմ գայլիկները, որ հաւաքուած իրենց առաջնորդին շուրջ, կը կազմակերպեն զանազան խաղեր: Յանկարծ ազմուկը կը դադրի և իրենց ագելան, որ մօտէն կը հետեւի խաղերուն. լռութիւնը խզելով, «նստեցէք տղաք» կ'ըսէ:

Կը հաւաքուին բոլորը իրենց ագելային շուրջ: Ան փոքրիկներու հասկնալի սճով կը սկսի խօսիլ սկառուութեան մասին և որպէս կենդանի օրինակ, ցոյց կուտայ ինքզինքը:

Յուզիչ և միանգամայն դաստիարակիչ էր իր պատմութիւնը, զոր առաջին տպաւորութեան տակ զրի կ'առնեմ:

Ագելան հանդարտ սկսաւ.

«Տղա՛ք, ես ալ ձեզի պէս փոքրիկ էի, եւ շատ չարասնի: Հիմնուած էր Պուքրէշի Հ. Մ. Բ. Մ. ի մասնաճիւղը, լսած էի անոր մասին մեր տանտիրոջ պզտիկէն, որ դպրոցական աշակերտ մըն էր, սակայն երբեք չէի հետաքրքրուած: Քանի մը տղաք պատճառեղան որ արձանագրուիմ անոր: Առաջի օրերուն շատ կը նեղուէի, որովհետեւ մայրս ռումանացի ըլլալուն, մեր տան լեզուն ռումաներէնն էր ու Ազգ. վարժարան գացած չըլլալով հայերէն չէի գիտեր: Ընկերներս կը ծաղրէին զիս, սակայն այն օրերու առաջնորդս իբր եղբայր լըջօրէն կը պարապէր հետս, կը մխիթարէր, կը զուարճացնէր եւ հայերէն դաս կուտար: Սյդ շրջանին էր որ մասնաճիւղի վարչութիւնը ձեռնարկեց գիշերային հայերէն դասերու. ես ալ աշակերտներէն մէկն էի: Բաւական սորված էի հայերէն գրել-կարդալը: Ահա, ձեզի այսօր Հ. Մ. Բ. Մ. ի մէջ սորված հայե-



ընտովս է որ կը խօսիմ, երախտապարտ եմ իմ կազմակերպութեանս, ան զիս բարձրացուց, ուխտած եմ ես ալ իմ կարգիս ուրիշները բարձրացնել»:

*Յայտնի կերպով յուզուած էի: Ագելաին ձայնը խորունկցաւ. յուզուած էր ինքն ալ և հազիւ լսելի ձայնով մը շարունակեց.*

« Այո՛, տեսէք, այսօր նշանուած երիտասարդ եմ, վաղը պիտի ամուսնանամ, եւ սակայն միշտ պիտի աշխատիմ Հ. Մ. Բ. Մ. ի կողքին, հո՛ն սորվեցայ հայերէնը, հո՛ն Յանչցայ լաւն ու բարին, հո՛ն գաղափար կազմեցի մաքրասիրութեան, աշխատասիրութեան եւ Յշմարտախօսութեան մասին. մանաւանդ հո՛ն Յանչցայ այժմու նշանածս»: (հոս միջանկեալ ըսեմ որ ագելաին նշանածը Հ. Մ. Բ. Մ. ի կայտերէն էր: Տղաքը լուռ էին,

ագելան կը խօսէր մերթ յուզուելով, մերթ սգևորուելով: Եկեղեցւոյ դանդակը միայն ընդմիջեց այդ արարողութիւնը:

Առանց նշմարուելու դուրս կուգամ աղումբէն և երկար կը խորհրդածեմ թէ՛ որքա՛ն հայ փոքրիկներ կան աշխարհի չորս կողմերը ցրուած, որքա՛ն վայրեր կան ուր զեռ Հ. Մ. Բ. Մ. ի մասնաճիւղեր գոյութիւն չունին, որքա՛ն են թիւը և անոնց որոնց ծնողները աշխատեման ճամբան բռնած իրենց յաջորդներուն ալ ժառանգ օտարութիւնը կը ձգեն միայն և վերջապէս որքան մեծ է թիւը այն ազգայիններուն, որոնք Հ. Մ. Բ. Մ. ը տակաւին տղայական զործ կը նկատեն: Այդպիսիներուն համար կը նուիրեմ այս յուզիչ տողերը:

Պուքրէշ ԱՐՄԷՆ ՍԱՅԵԱՆ



ՊՈՒՔՐԷՇԻ ԳԱՅԼԻԿՆԵՐԸ



# ԻՆՉՊԷՍ ՍԿԱՌԻՏ ԵՂԱՅ

Պօղոսիկը և ևս ամառանոցէն վերազարձին եթէ ոչ տարիքով զէթ փորձառութեամբ ճշմարիտ սկսուաներ եղած էինք:

Ծովեզերքը մէկ ամսուան միջոցին սկսուաներուն բանակավայրին մօտ մեր անցուցած կեանքը մեզ շատ բան սորվեցուցած էր սկսուտական կեանքէն: Կը ջանայինք զիտցածնիս և նոյնիսկ չզիտցածնիս սորվեցնել մեր թաղի հինգ մանչուկներուն, սրոնց տուած էինք «կատու խմբակ» անունը: Զէ՞ մի որ սկսուաներն ալ այսպէս կենդանիի մը անունը կուտային իրենց տղոց:

Բոլորս ալ կատուի մլաւիւնը հիանալի կերպով կատուններն իսկ խաբելու աստիճան կատարեալ կը կեղծէինք: Ու ևս մօրմէս հին թաշկինակ մը ուզելով, գաւազանի մը ծայրը կապելով, զրքի մը մէջէն ալ կատուի պատկեր մը կը տրեւոյ՞ վրան փակցուցած, ու այդպէսով մեր խմբակի զրօշը պատրաստած էի:

Բոլոր տղաքը իրենց հօր կամ մեծ եղբօր հին գլխարկները կը գործածէին, որոնց վրայ իբր նշանակ խոշոր կոճակներ կարած էինք:

Զուարճալի բան էր տեսնել մեր «կատու խմբակ»ը, ահանջներուն վրայ իջած գլխարկներով, գոյնզգոյն շապիկ ու տափատներով, կարճ ու երկայն գաւազաններով, ու խոշոր թաշկինակներ վզերնին կապած: Ասոնց վրայ աւելցուցէք նաեւ մեծ գօրծ մը կատարելու զիտակցութիւնը ունեցող լուրջ զէմքեր:

Ես իբր առաջնորդ երկու կտոր ժապաւէն զնդասեղով հաստատած էի ուսիս, իսկ Պօղոսիկը հին մէտայլ մը կախած էր կուրծքէն իբր խմբապետ:

Ու ամէն կիրակի, քայլ առաջ օ՛ն, աջ, ձախ, խուճկ կաց, ետ դարձ, ... մեր «կատու խմբակ»ը կը մարզուէր անզիտակցօրէն:

Ամէն կիրակի մեր սկսուաներէն մէկուն պարտէզը բանակում կը սարքէինք, ու բան չէինք մոռնար կատարեալ ընելու համար մեր բանակումը:

Կամաց կամաց, մեր ծնողքները

վարժուեցան զալ զիտել մեր մըջիւնի գործունէութիւնը, մանաւանդ մեծերն ալ կ'օգնէին մեզի սորվեցնելու համար մեր չզիտցած բաները:

Մեր սիրելի խաղը հետզհետէ իրականութեան երեւոյթ կ'առնէր: Սկսուտութիւնը մեր մէջ արթնցուցած էր ամէն բանի հանգէպ հետաքրքրութիւն, առիթ չէինք փախցնել նոր բան մը սորվելու, եւ երեւոյթներու կամ զէպքերու պատճառներուն բացատրութիւնը պրպակելու:

Այնպէս որ քիչ առ քիչ մեր կեանքի մէջ ունեցած փորձառութիւններն ու ծանօթութիւնները ընդարձակուել ըսկսան:

Այլևս փողոցը կուրծքերնիս ուռած եւ հպարտութեամբ կը բալէինք: Զէ՞ մի որ ամէն մարդ մեզի «մեծցած պրպակներ» կը կոչէին:

Այսպէս օր ըստ օրէ մեր «կատու խմբակ»ը անուն հանեց թաղին մէջ: Իսկ մենք «կատու»ներս իրարու հետ կը մրցէինք բարիք գործելու համար: Ալ զրեթէ կ'ստեղծէինք բարիք գործելու առիթները եւ հազիւ թէ ինքզինքնիս կրնայինք զսպել զոները զարնելով հարցնելու թէ արդեօք օգնութեան կամ ծառայութեան մը պէտք ունէ՞ին:

Կամաց կամաց սկսան մեզ կոչել թաղին «բարի կատուներ»ը, եւ ուր որ ըծիշկ կանչելու, զեղազիր շինել տալու կամ ոեւէ փոքրիկ ծառայութեան մը պէտքը զգացուէր, անպայման «բարի կատու» մը հոն էր, կարճես զեանէն կը բուսնէին պէտք եղած վայրկեանին իրենց օգնութիւնը բերելու համար:

Աւելի վերջը «բարի կատու»ները ըուրը մէկ միեւնոյն զպրոցին աշակերտները ըլլալով՝ միշտ օրինակ եղան իրենց բարի վարքով ու զասերու մէջ առաջնութիւնով:

Այսօր, մեր եօթը կատուները կը կազմեն Հ. Մ. Լ. Մ. ի Յրդ խումբի կատու խմբակը, զոր, իբր տիպար խումբակ մը ցոյց կուտան խմբապետները, իր փորձութեան եւ սկսուտական ճշմարիտ բարձր ոգիին համար:

Փարիզ Գրի աւա՛  
(Վ.Ե.Ջ) Բ. ԺՊՏՈՒՆԻ



# ՍՈՒՐԻԱ - ԼԻԲԱՆԱՆ

## ՊԵՅՐՈՒԹ

... Խմբագրութիւն Հայ Սկսուածի:  
 Մեծ ուրախութեամբ կ'ողջունեմ  
 Հայ Սկսուած թերթի վերերեւումը: Իրա-  
 պէս Հայ Սկսուածի ընթերցումը 1922  
 տարեշրջանին՝ Որբանոցիս սկսուածնե-  
 րուն համար կրթիչ և բարձրացնող ոյժ  
 մըն էր, անոնց մտային և ֆիզիքական  
 դաստիարակութեան համար: Ներկայ  
 գրութեամբս շնորհաւորելով Հայ Սկս-  
 ուածի վերերեւումը, պիտի խնդրէի որ  
 բարեհաճութիւնը ունենաք թերթ զրկե-  
 լու: Սկսուածական և մարդական հին և  
 նոր հայերէն գիրքեր, պրօշիւրներ, ինչ  
 որ կայ ձեր մօտ, հաճեցէք ինձ ուղար-  
 կել: Նոյնպէս պիտի խնդրէի որ հաճէիք  
 մեզ տեղեակ պահել սկսուածական կեան-  
 քի անցուղարձերէն:


Ինչպէս անցեալ շրջանին մէջ, «2000  
 մղոն Ամերիկայի ներքեւ» թերթօնը

սկսած էիք հրատարակել. միթէ հնա-  
 բաւորութիւն չկա՞յ զայն շարունակելու:  
 Սկսուածները հետաքրքրութեամբ կը  
 կարդային և կը փափաքին վերջաւորու-  
 թեան տեղեակ ըլլալ:

Այս քաղաքին մէջ ևս ամէն կարե-  
 լի միջոցներովս կ'աշխատիմ որ Հ. Մ.  
 Բ. Մ. ք. գորանայ: Մեր որբանոցի և  
 քաղաքիս մէջ սկսած սկսուածական աշ-  
 խատանքի մասին կը խոստանամ գրել:  
 Հայ Սկսուած թերթի առաջին տարուան  
 հաւաքածոն եթէ երբէք ինձի կրնաք  
 հայթայթել, շատ զոհ կը մնամ, ինձի  
 ամենամեծ ծառայութիւն մը ըրած կ'ըլ-  
 լաք:

Եզրայրական սիրով  
 ՀԱՅԿ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Հ. Բ. Բ. Միւլթեան  
 «Քէլէկեան-Սիսուան» Որբանոց  
 ՊԵՅՐՈՒԹ



Նկար՝ ՍԵԼԻՃԵԱՆ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱԿԱՅՐ ՄԸ  
 (Հ. Մ. Բ. Մ. փարիզ)



# ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆԵ

## ՊԻՏԻ ՀԱՍԿՆԱՆՔ ԱՐԴԵՕՔ

Ազգային բոլոր մարմիններու եւ մասնաւորապէս մարզական բոլոր անջատ միութիւններու ուշադրութեան կը յանձնենք հետեւեալ սուղերը, որ քաղուած է ֆրանսական թերթէ մը: Մասնաւոր հպարտութեամբ կը մատնանշենք այս գրութիւնը, ցոյց տալու համար թէ, հայերս նախածնունարկ եղած ենք այս գործին մէջ:

Այս տեսակէտով, Հ. Մ. Բ. Մ. ք միակն է իր տեսակին մէջ, ինչպէս դիտել տուինք նախորդ թիւի կողքին վրայ: Վստայ ենք որ, որ մը եւրոպական ազգեր պիտի անդրադառնան անոր դաւանած սկզբունքին վրայ:

Կը հաւատանք որ ազգային վարիչ շրջանակները եւս լրջօրէն նկատի պիտի առնեն Հ. Մ. Բ. Մ. ք եւ իրենց աջակցութիւնը պիտի բերեն անոր, դնելու համար զայն տեսական եւ ամուր հիմի վրայ: Ի. Խ.

Սերպիոյ կառավարութիւնը կուզայ մէկ հարուածով լուծել, մարզական անուններու տակ գործող բոլոր միութիւնները, սա պարզ նկատումով որ, անոնք կրնան իրենց նպատակէն շեղելով, վրտանգաւոր եւ նոյնիսկ անօգուտ դառնալ:

Այսպէս, հոն, սրորը պետական հսկողութեան տակ է, բոլոր Սերպերը, Խրուածները եւ Սլովէները, ապէ ետքը չը պիտի կրնան անջատ միութիւններ կազմել, այլ պարտաւորիչ կերպով պէտք է մաս կազմեն պետական միութիւններուն, հետեւելով մասնագէտներու կողմէ հաստատուած մասնաւոր ծրագրի մը, որ անտարակոյս անվիճելի կերպով աւելի օգտակար է քան այս կամ այն անդլուխ եւ առանց ուղղութեան միութիւնները, որոնց վարիչները յաճախ չեն դիտեր թէ ինչ կ'ընեն:

Իտալիա, նմանապէս, ատենէ մը ի վեր սրորի մասնաւոր ուշադրութիւն մը դարձնել սկսած է, բոլոր գործող միութիւնները, պետական հսկողութեան

տակ աննելով եւ որոշ ուղղութիւն տալով անոնց:

Չեմ ուզեր խօսիլ Չեխոսլավաքիոյ մէջ հինէն ի վեր գոյութիւն ունեցող Սոփոլներու մասին, ծանօթ ըլլալով բոլորին անոնց օգտակար գործունէութիւնը, ըլլայ մարզական թէ ազգային տեսակէտով, այդ կազմակերպութիւնը արդէն աշխարհի հիացման արժանացած է:

Հարկ չի կայ հստ թուել բոլոր ազգերը, ամէնքն ալ ուշ կամ կանուխ նոյն ուղղութեան սկսած են հետեւիլ:

Պատերազմէն առաջ գրեթէ միայն Անգլիա էր որ մասնաւոր ուշադրութիւն դարձուցած էր սրորի, կէս պաշտօնական երեւոյթ մը տալով անոր, ինչպէս հիւսիւսային երկիրներ ըրած են:

Մնացեալ բոլոր ազգերը կարելի է ըսել առանց բացառութեան, մարզանքը խաղի տեղ էին դրած, եւ կամ պատանեկութեան տեսակ մը ժամանցի միջոց:

Սակայն աւերիչ պատերազմը զոյցօրուան վարիչներուն մարզանքի պակասին աւերները:

Գործը խիստ մեծ տարածութիւն ունէր, այսուհանդերձ ոչ ոք ընկրկեցաւ անոր դժուարութեան առջեւ: Բոլոր ազգերը զեղին, սեւ, ճերմակ, ամէնքը իբրար անցան կարծես իրարու հետ մրցելու համար, միլիոններ քուէարկեցին, զպրոցներ հիմնեցին մարզանքի ուսուցիչ պատրաստելու, մասնագէտներ մէջտեղ հանելու համար:

Մենք միջազգային մրցումներու միջոցին Փարիզի մէջ ամէն օր կը տեսնենք, զանազան ազգերու, սրորին տուած մասնաւոր կարեւորութիւնը: Գաղտնիք մը չէ այլ եւս որ կառավարութիւնները միլիոններով տարեկան պիւտճէ կը յատկացնեն այս շարժումին:

Զինադադարէն ասդին ազգերու ապագան վարող խոհուն անձեր տեսան որ,



այս գործը ենթադրուածէն շատ աւելի մեծ է և կարելորդ: Ազգերու գոյութիւնն է կապուած անոր, սէտք էր աւելի կարելորութիւն և պաշտօնական գոյն տալ, առնելով զայն պետական հակակշռի տակ, և տալով անոր որոշ նպատակ, հաւաքական աշխատանքի լծել բոլոր միութիւնները:»

Ուրեմն Հայերուս մէջ Հ. Մ. Ը. Մ. ի ամբ մը երիտասարդ հիմնադիրները ո՛ր աստիճան իմաստուն եղած են, եւրօպական ազգերու 10 տարի վերջը մտածածը իրենք տասը տարի առաջ մտածելով և գործի վերածելով, ան ալ նիւթական ի՛նչ պայմաններու տակ: Երբ մեծ և զօրաւոր ազգեր պետական խոշոր պիւտճէներ յատկացնելով և կառավարական հսկողութեան ենթարկելով հազիւ կը յաջողին, Հ. Մ. Ը. Մ. քասոնցմէ ոչ մէկը ունեցած է, ընդհակառակը, նիւթական և բարոյական շատ մը արդելքներու յաղթելով և ճամբայ հարթելով կըրցած է հիմնաւորել այս փառաւոր շարժումը: Վ. Թ.

### ՅՈՒՏՊՈԼ

9 ՄԱՐՏ.— Հ. Մ. Ը. Մ. ի Փարիզի Շրջանին Մասնաճիւղերուն պատկանող խաղացողներէն կազմուած խառն խումբը կը յաղթէ Վիլյէ Քօթրէի խումբին 6 ի դէմ 1 ուլ:

— Ինչպէս անցեալ տարի, Պուսոյ Հայկական «Նոր Շիշլի» խումբը այս տարի ալ հաւանաբար Ռուճանիս այցելէ ֆուտպոլի ճրցուճներ կատարելու համար. իրեն այս աւթիւ բազմաթիւ առաջարկներ եղած են:

— 2 ՄԱՐՏ.— Փարիզի ծօտակայ Տուրտանի մէջ տեղւոյն խումբը կը յաղթէ Հայկական «Տորք» խումբին 0 ի դէմ 5 ուլ:

— Ամիբալ Պէթիզի խումբը և Հայ Մարզականը հաւասար կը ճնան 1-1 ուլ:

— 16 ՄԱՐՏ.— Ժընէվիլիէ խումբը կը յաղթէ Հայ Մարզականին 3 ի դէմ 0 ուլ:

— «Տորք» խումբը կը յաղթէ Անկիէն - Էր-ձօնի խումբին 2 ի դէմ 1 ուլ:

— 23 ՄԱՐՏ.— Տէօ Վիլիէօի մէջ տեղւոյն խումբը կը յաղթէ Հ. Մարզականին 4 ի դէմ 0 ուլ:

— Ապրիլ 5 ին և 6 ին Փարիզի մէջ տեղի կ'ունենան ֆուտպոլի «Ֆրանսայի Բաժակ» ի ճրցուճներուն «ալմի ֆինալ»ը. մէկ կողմէ կը ճրցին հարաւ. Ֆրանսայի համբաւաւոր խումբերը՝ «Ֆուտպոլ Գլիւպ Սէթ» և «Օլիմպիկ տը Մարսէլ», ծիւս կողմէ՝ «Ռասինկ Գլիւպ տը Ֆրանս» (Փարիզ) և «Ամիէն Աթլէթիք Գլիւպ» (Հիսիս.):

— Անցեալ ամիս տեղի ունեցած Միջազգային ֆուտպոլի մրցումներէն յիշենք հետեւեալ արդիւնքները.—

Իտալիա	կը յաղթէ	Գերմանիոյ	(2-0)
Իտալիա (Բ.)	»	Յունաստանի	(3-0)
Բօրթուկալ	»	Ֆրանսայի	(2-0)
Ֆրանսա և Զուիցերիա			(3-3)
Աւստրիա և Զեքսուալաքիա			(2-2)

Գրած էինք թէ Ռուսիոս այս տարի իր Անկախութեան հարիւրամեակը տօնելու առթիւ, խնդրած էր կազմակերպել ֆուտպոլի աշխարհի ախոյեանութեան ճրցահանդէս մը. գաղափարը գեղեցիկ էր, սակայն գործադրութիւնը դժուար: Արդարեւ եւրոպական բոլոր խումբերուն ծիւսայն մերժուծին առջեւ, Ռուսիոս որոշած է կազմակերպել Ամերիկայի Ախոյեանութեան ճրցահանդէս մը ծիւսայն, որուն պիտի մասնակցին հարաւային և հիսիսային Ամերիկայի տէրութեանց ազգ. խումբերը: Հակառակ անոր որ Ռուսիոս երկու անգամ (1924 ին և 1928 ին) եւրոպա եկած էր, և հակառակ ասոր որ կը խոստանար ճամբորդող խումբերուն բոլոր ծախքերը հոգալ, ոչ մէկ ազգ չարձար գատեց երկու ամիս տեւելիք երկար ճամբորդութեան մը ձեռնարկել:

Ի փոխարէն սակայն եւրոպական ազգերը պիտի ունենան ուրիշ կարգի ճրցահանդէս մը՝ որուն պիտի մասնակցին ոչ թէ Ազգային, այլ իւրաքանչիւր երկրի այս տարուան ախոյեան խումբերը: Սոյն ճրցահանդէսը տեղի պիտի ունենայ Ժընէվի մէջ, զուիցերիացոց նախաձեռնութեամբ:

— Հ. Մ. Ը. Մ. ի նախկին խաղացողներէն Ս. Կարապետեանի խմբապետութեան ներքեւ գտնուող «Գլիւպ Օլիմպիք Պիյանքուր» խումբը շահած ըլլալով Փարիզի Լիկին Գ.րդ դասակարգի (Փրըմիէր



Տիվիզիոն) ախոյեանութիւնը, Բ. դասակարգի (բրոսօսիոն տը Տիվիզիոն Տ'օննէօր անունը կուտան) վերջին խումբերուն հետ կը կատարէ մրցումներ, որոնցմէ յաղթական ելլելով — ինչպէս կը յուսացուի — պիտի անցնի Բ. դասակարգը:

### ԹԵՆԻՍ

Անցեալ փետրուարի վերջերը նանթ բաղաքին ձէջ տեղի ունեցած մրցահանդէսին առաջնութիւնը շահեցաւ Լ. Ալանկիլը թէ «սէմբլը»ի եւ թէ «տուպլը»ի ձէջ:

— Զուիցերիոյ համբաւուոր ձմեռնային՝ Սէն Մօրիցի ձէջ Յր. Արամօֆ շահեցաւ տեղւոյն մրցահանդէսին կանանց մրցումներուն առաջնութիւնը, յաղթելով վերջին մրցումին ձէջ Յր. Նէօֆէլտի 6-1, 6-1 սով:

— Մարտ 20-23 ին Փարիզի արուարձաններէն Անիէրի ձէջ տեղի ունեցաւ ճիքօթ խումբերու մրցահանդէս մը որուն ճասնակցեցաւ նաեւ Յր. Արամօֆ, Ա. դասակարգին պատկանող Ալէն Պէրնարի ընկերակցութեամբ: Այս զոյգը պարտուեցաւ «բառ տը ֆինալ»ին ձէջ: Իսկ «տուպլը» մրցումներուն ձէջ Լ. Ալանկիլը՝ ժօրժի ընկերակցութեամբ հասաւ ճինչեւ «ֆինալ»՝ ուր պարտուեցան Լօրան-Թէրնիսէն զոյգէն:

— «Ապագայ»ի կաղճակերպած Հայկ. Բ. Մրցահանդէսին արձանագրութիւնները բացուած են: Մուտք՝ 15 ֆրանք «սէմբլը»ի եւ 10 ֆրանք «տուպլը»ի համար:

### Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

#### ՖՈՒՏՊՈՒԼԻՍՏՆԵՐ ԿԸ ԾԱԽԵՆ ! !

Աշխարհի ամէնէն սուղ արժող ֆուտպոլիստները սկզբատիացիներն են: Այսպէս, Անգլ. Նիւքասթէլ Երնաթըտ խումբը 562,500 ֆրանք վճարեց Տընի Երնաթըտ խումբին գնելու համար չըջընսընը: Պլապըրն Բովըրս 243,750 ֆր., Սէն ձօհնսթընի՝ Իմրայի համար: Լիվըրբուլ 687,000 ֆր., Այր Երնաթըտ խումբին՝ Սմիթի համար ելին:

Գնորդ խումբերը պիտի վճարեն նաեւ, սոյն խաղացողներուն ամսականները:

Իսկ, Իտալիոյ ազգ. խումբին կեդրոնի յառաջագահ Լիպոնաթի, հակառակ բրօֆէսիոնէլ ութիւնը պաշտօնապէս չընդունուած երկրի մը մէջ գանուելուն, հետեւեալ գումարները կը ստանայ իր խումբէն՝ Թորինոյէ ամիսը 4000 լիբրէթ, իւրաքանչիւր խաղի համար 300 լիբրէթ, տարեկան նուէր՝ 25,000 լիբրէթ:

\*. Ֆրէտէրիք Ուօլ, Անգլիոյ ֆուտպոլի ազգ. զաշնակցութեան քարտուղարը անցեայները տօնեց իր ծննդեան 75 ամեակը: Այս առթիւ անգլ. կառավարութիւնը իրեն տուած է Սըր ութեան տիտղոսը որ բարձր պատիւ մըն է անգլիացւոց համար:

Վերջին նախարարական տազնապին պատճառաւ փոխուեցաւ նաեւ Ֆրանսայի Մարմնակրթական նախարարը՝ Մ. Կանրի Բաթէի տեղ անցնու. Մ. Մօրինօ:

Ամէն տարի կրկնուող Կրօս-Քընթրի միջազգային մրցումին մէջ, Անգլիացիք Ա. ելան խմբական դասաորման մէջ 80ի դէմ 31ի կէտով յաղթելով Ֆրանսացւոց, որոնք 1926 էն ի վեր միշտ յաղթող ելած էին: Իրաւ է թէ շատ մը ֆրանսացի ծանօթ վազողներ չէին մասնակցած այդ մրցման, որ տեղի ունեցաւ Անգլիոյ (Լիմինկթըն) մէջ:

### ԻՆՉ Է ԱՍԱԹԷՕՐ ՍԸ

Յայտնի է թէ մարզական միութեանց կողմէ կազմակերպուած հանգէսներուն մուտքին վրայ կառավարութիւնը աուրք չի գանձեր, բացի այն պարագայէն՝ երբ յայտագիրը բրօֆէսիօնէլ (սբօրը իրենց ապրուստի միջոց ընողներ) մրցումներ կը պարունակէ:

Մարմն. նախարար Մ. Հանրի Բաթէի առաջարկով քօմիթէ նասիօնալ տէ Սբօրը որ մարզ. բոլոր զաշնակցութիւններուն ներկայացուցիչներէն բաղկացած մարմին մըն է, հետեւեալ բանաձեւով որոշեց ամաթէօրի մը հանգամանքը:

Ամաթէօր է այն որ կը հետեւի սբօրի կամ կը մասնակցի մրցումներու՝ յանուն սբօրի սիրոյն, առանց իր այդ մասնակցութենէն ակնկալելու դրամական մըրցանակ կամ վարձատրութիւն մը, կամ ապրուստի միջոց մը:



### ՄԱՐԶԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ֆուտպոլի ֆրանս. Դաշնակցութիւնը (Ֆետէրասիօն ֆրանսէզ տը ֆօթպոլ ա-սօսիասիօն) հաստատած է տարեկան մրցանակներ՝ տրուելու համար այն զը-րոզներուն՝ որոնք ուղղակի ֆուտպոլի վրայ խօսող վէպեր կամ պատմութիւն-ներ զրի պիտի առնեն: Այս տարի ա-ռաջին անգամ ըլլալով սոյն մրցանակ-ները տրուեցան հետեւեալներուն. —

Ա. «Սէն Թէքսիլբէրի համբարձումը» (Ժան Տօվէն):

Բ. «Ֆուտպոլի մրցում մը» (Օր. Էլէն Ռուվրէ):

Գ. «Պերնար» (Լէօն Հիրզ) եւ «Ֆուտ-պոլի մրցում մը մայրապետանոցին մէջ» (Վիքթօր Լարօք): Առաջինը ստացաւ 2000 ֆրանք, երկրորդը՝ 1000, իսկ երրորդները՝ 500 ալան ֆրանք:

Ա. մրցանակը շահողը՝ Ժան Տօվէն մարզիկ մըն է. «Փարի - Իւնիվէրսիթէ Գլիւպ» էն:

ԿԵԱՆՔԸ Հ. Մ. Ը. Մ. Ի ՄԷՋ

### ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԱՅԷՆՔ

Հ. Մ. Ը. Մ. Ի Յունաստանի շրջանը կազմուած է 1924ին եւ ունեցած է իր գործունէութեան փայլուն շրջանները:

Յունաստանի կազմը ունի իր մար-դական եւ սկաուտական բաժանումները: Մինչեւ 1929 տարին, Միութիւնը ոյժ տուած է սկաուտիզմի եւ հասցուցած փորձառու եւ նուիրուած առաջնորդներ եւ խմբապետներ:

Մասնակցած են Յունական խումբե-րու բոլոր արշաւներուն եւ միշտ փայ-լուն նիշերու ու գովասանքի արժանա-ցած են Յոյն Ընդհանուր Պետէն:

1929ի շրջանը բեղուն եղած է մար-դական գործունէութեամբ: Միջմասնա-ճիւղային փորձ-մրցումներէն յետոյ, տեղի ունեցաւ Յունահայ Ա. Ողիմպիա-կանը Աթէնքի մէջ, որուն մասնակցե-ցան Աթէնքի, Փիրէայի եւ Կրէտէի շըր-ջաններու մարզիկները, ինչպէս նաև անհատ մարզիկներ Քսանթիէն եւ Սելա-նիկէն:

Յունահայ Ողիմպիականը շրջանիս մարդական կատարելութեան փորձա-քարը հանդիսացաւ եւ մեծապէս խան-դավանց հայ երիտասարդութիւնը մղե-լով զայն դէպի մարմնակրթանք: Ողիմ-պիականէն յետոյ սկաուտական գոր-ծունէութեան ծրագիրներ մշակուեցան:

Յունաստանի Գ.րդ Պատգմ. Ժողովը գումարուեցաւ Հոկտ. 13ին եւ ընտրեց նոր վարչութիւնը հետեւեալ կազմով. —

Պատ. Յ. Աճէմեան, Պ. Պ. Ս. Ճէվահիր, Մ. Փափաղեան, Պ. Գայեան, Ա. Տէր Յա-կոբեան, Տ. Ալիքսանեան, Պ. Սարգիս-եան: (Որոնցմէ երկու վերջինները ան-դամ էին հրաժարող վարչութեան):

Իբր խորհրդական հրաւիրուեցան նաև Պ. Պ. Մ. Տամլամեան եւ Հ. Տէպէեան:

### ՄԱՍՆԱՃԻՊԵՐ

Յունաստանի Նըջանային վարչու-թիւնը մարդական եւ սկաուտական խում-բեր ունի հետեւեալ Մասնաճիւղերուն մօտ. —

Ֆիքս եւ Սինկրու՝ (Աթէնք), Քոքինա եւ Լիբադմա՝ (Փիրէա), Նէօն - Ֆալիրոն՝ (Աթէնքի եւ Փիրէայի միջև): Իսկ մար-դական եւ ֆութպոլի խումբեր ունի՝ Ռէ-թիմօյի ու Գանտիոյ մէջ. (այս վերջին քաղաքը կը գտնուի Հ. Մ. Ը. Մ. Ի եռան-գուն աշխատակից՝ վահրամ Ս. Փա-փաղեան):

Ողիմպիականէն յետոյ, վերակազ-մուեցաւ Սելանիկի Հ. Մ. Ը. Մ. Ի Մաս-նաճիւղը, որը այսօր կը հաշուէ 80 ի մօտ անդամներ: Նոյեմբերի վերջերը կազ-մուեցաւ Հ. Մ. Ը. Մ. Ի Մասնաճիւղ մըն ալ Քափալլայի մէջ: Նոր Յունաստանի մէջ ծայր տուած Հ. Մ. Ը. Մ. Ի եան շար-ժումը որ խիստ արդիւնարեք ըլլալու ոչուած է:

Մօտ օրէն Մասնաճիւղեր պիտի կազ-մուին նոյնպէս Քսանթիի եւ Տրամայի մէջ:

### ՆՈՐ ՆՐՁԱՆ 1929-1930

Աթլէթիկ եւ ֆութպոլի գործունէու-թեան ծրագիրը Կեղը. վարչութեան կողմէ վաւերացուելով գործադրուիւն



դրուեցաւ: Աթէնքի եւ Բիրէայի մարդիչ նշանակուեցաւ Կ. Շահինեան:

Հ. Մ. Ը. Մ.ի Յունաստանի Շրջանային Կեդր. Վարչութեան հասցէն է.— HOMENETMEN, P. O. Box 51, Athens (Grèce):

### ՍՈՒՐԻԱ - ԼԻԲԱՆԱՆ

#### ՊԷՅՐՈՒԹ

ՊԷՅՐՈՒԹ, 25 փետրուար. — Սուրիա-Լիբանանի Հ. Մ. Ը. Մ.ի շրջանի առաջին Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ ՊԷՅՐՈՒԹի մէջ:

Շրջանային Վարչութեան անգամ ընտրուեցան Պ. Պ. Բժ. Ալէքսան Պէշճեան (Ատենապետ), Վահան Թորոսեան (Ատենազպիր), Տաճատ Արապեան (Գանձապահ), Սիմոն Թէրճանեան, Խորէն Սուքիասեան եւ խորհրդականներ՝ Բժ. Յակոբ Գասապեան եւ ձորճ Մարըլեան:

Սկսուտական ճիւղի վարիչ նշանակուեցաւ Սիմոն Թէրճանեան, իսկ մարդականի վարիչ՝ Խորէն Սուքիասեան:

Նոր Վարչութիւնը գործի ձեւնարկած է յունուարին:

Այս կերպով, Սուրիոյ եւ Լիբանանի շրջանները ճիւղեալ ձեւով կազմուած են եւ գործի սկսած լաւ կազմով ծր:

Յաջորդով մանրամասն տեղեկութիւն կը հաղորդենք Ձեզ:

Թ. Գ. ԲԱԿԻՅ

#### ՋԱՂԷ

Խճբազրութիւն Հայ-Սկսուտի

Սիրելի եղբայրներ,

Ուրախութիւնով ստացանք Հայ-Սկսուտի թիւերը: Պիտի ուղէի ճի բանի ճանութիւններ տալ ձեր Մասնաճիւղի մասին: Մենք գտնուելով հանդերձ Լիբանանի լեռներու անյարժար գիւղաքաղաքի մը մէջ, ուրախ ենք որ ունինք Հ. Մ. Ը. Մ.ի պղտիկ մասնաճիւղ մը՝ կապուած ՊԷՅՐՈՒԹի մասնաճիւղին, եւ որ գոյութիւն ունի 3 տարիներէ ի վեր, կազմակերպուած ճի բանի եռանդուն

ընկերներու ջանքերով: Ներկայիս կը բաղկանայ նկարագրով ճարուր մօտ 15 — 20 երիտասարդներէ, որ տեղւոյս հասարակութեան գնահատանքին արժանացած է: Վարչութիւնը բաղկացած է 5 հոգիէ: Միութիւնս կ'ունենայ կանոնաւոր եւ շարունակական գործունէութիւն, միշտ շփման մէջ մտնելով տեղւոյս հայ հասարակութեան հետ:

Այս առթիւ Միութիւնս իր բոլոր անդամներով կը շնորհաւորէ ձեզ սոյն յոյժ օգտակար ձեռնարկին մէջ՝ ճաղթելով յաջողութիւն եւ յարատեւութիւն: Միեւնոյն ատեն խնդրելով ձեզմէ որ մեզ անձան չձգէք Հայ-Սկսուտէն:

Եղբայրական բարեւներով

Չահլէ (Սուրիա)

ԱՄՐԳԻՍ ՌԻՆՃԵԱՆ



Հ. Մ. Ը. Մ.ի Փարիզի ֆուտպօլի խառն խումբի պահեստին:

### Յ Ա Կ Ո Ր Յ Ա Կ Ո Ր Ե Ա Ն

### ՕՐ. ՆՈՅՆԵՄԻ ԹՈՒԼՈՒՄՊԱՃԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱՅԱՄ

Փետրուար

Bois-Colombes

Մեր շնորհաւորութիւնները

### ՊԱՏՐԱՍՏՈՒԵՅԷՔ

Մայիսի մէջ տեղի պիտի ունենայ սկսուտական մեծ գերեկոյթ մը փարիզի խոշոր սրահներէն մէկուն մէջ որ պիտի գերազանցէ բոլորը:

Մանրամասնութիւնները մ'օտ օրէն կը ծանուցուի թերթերու մէջ:



### ԱԹԼԷԹԻԶՄ

Աթլէթիզմը իր մէջ կ'ամփոփէ դաշտային խաղերու ամէնէն աւելի ճիշդ պահանջող տեսակները, առհասարակ իր բոլոր ձեւերը ունին այդ պահանջքը, առանց որուն մրցումը կարելի չէ: Ընդդէմ կը նշանակէ սպառումի մէկ գերագոյն վայրկեանը, ան կը տարբերի զանազան խաղերու մէջ առաւել կամ նուազ տեսողութեամբ: Այս ուժի բնական սպառումները պիտի կառավարուին մարզիկին կողմէ, հակառակ պարագային անօգուտ և երբեմն վնասակար կը դառնան: Կանոնաւոր փորձերով միայն պիտի յաջողինք զայն օգտակար դարձնել մեզի: Ճիշդ մանաւանդ կը դառնայ վնասակար այն ժամանակ, երբ կ'ուզենք ցոյց տալ այն տեսակ խաղերու մէջ, որ մեր ֆիզիքական ընդհանուր կազմուածքին չի յարմարիր: Նկատուած է որ, հաստ կազմուածքով յաղթանդամ մարզիկներ չեն կրնար վազել. անոնց կազմուածքը չի նպաստեր այդ շարժումին. անոնց մէջ ճիշդ սպառումը աւելի շատ է քան բարակ, երկայն զնդերներէն բաղկացած մարզիկները աւելի տրամադիր կ'ըլլան ցատկելու, ծանրութիւն նետելու, եւլն.: Ասիկա ընդհանուր տեսակէտ մը չէ անշուշտ, բացառութիւններ եղած են շատ մը առիթներով. թէ ճիշդ հակառակ արդիւնք մը տուած են. ատոր ալ պատճառը պէտք է գտնել, մարզիկին անձնական տրամադրութեան, փափաքին և մէթոտով աշխատութեանը մէջ:

Մենք ուրեմն, զանց առնելով այս վերջին պարագան պիտի սկսինք, նրկատի առնելով մեր մարմնական կազմուածքը, տրամադրութիւնը և տարիքը: Որովհետեւ ամէն խաղ ամէն տարիքի յարմար չէ, ինչպէս ամէն սիրտ ամէն փորձի:

Կ'ուզեմ կրկին յիշել հոս սա շատ կարեւոր կէտերը՝ բժշկական քննու-

թեան անհրաժեշտութիւնը, սննդառութեան կարեւորութիւնը և ֆիզիքական ու հոգեկան պարագաներու նկատառումը:

Պէտք չէ կարծել թէ աթլէթիք խաղերը ամեն ինչ կը կատարելագործեն մեքենաբար զորձադրուելով: Ան՝ պաշտպանը պիտի ըլլայ յառաջիկայ բոլոր անպատեհութեանց, տեսակ մը զրահ ֆիզիքական կեանքի պայքարին. պատրաստելով զօրաւոր սիրտ մը, առողջ թոքեր, մաքուր արիւն և վերջապէս գեղեցիկ ու ճկուն մարմին մը համեմատական զնդերներով, եթէ մէթոտիկ և առանց ծայրայեղութեան հետեւինք և շարունակենք անոր բոլոր ճիւղերը: Ես ալ սկզբունքով հակառակ եղած եմ մասնագիտութեան. ան մասնաւորապէս մեր հայ տղոց պայմաններուն յարմար չէ, որովհետեւ որ եւ է մասնագիտութիւն ձեռք բերելու համար պէտք է ունենալ բացառիկ կարողութիւն և տեւական փորձ. այս ձեւով զնդերները պիտի ստանան այս կամ այն ճիւղին մասնաշատուկ կարողութիւնը, տեսակ մը վարժութիւն, որ ուրիշ ճիւղի չպիտի յարմարէր: Այսպէս, դիտած եմ որ, երկաթ նետող մը, շատ քիչ անգամ ցատկող մը կամ արագ վազող մը եղած է, որովհետեւ իր սրունքները այդ ուղղութեամբ չեն մարզուած, և փոխադարձաբար, եւ երբ հարցուցած եմ թէ ինչու արագութիւն չեն փորձեր, որը նոյնքան կարեւոր է որքան սկաւառակը, պատասխանած են թէ իրենք միայն սկաւառակ նետող եղած է, և միայն այդ ճիւղը փորձած:

Շար. (2)

ՊԵՐՃ ԶԱՅԸՆՆԱՆ

ՎՐԻՊՍԿ.— Նախորդ թիւին կողքին վրայ եւ մէջը «ձեռքէ հատը 2 ֆրանք» գրուած էր, պիտի ըլլայ 3 ֆրանք, իսկ էջերուն թիւը պիտի սկսի 73էն եւ պիտի վերջանայ 88ով:

Վարդու.թիւն

Le Gérant : DIRAN PERTCHEMLIAN

Imp. MASSIS, 208 bis Rue Lafayette, PARIS



# ՀԱՅ ՍԿԱՈՒՑ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Պ. Արտաշէս Պատմաճեան, Մէկ օրինակ տարեկան, յատկացուցինք Քսանթի,  
(Յունաստան):
- Պ. Սահիանեան, Մէկ օրինակ տարեկան, յատկացուցինք Թորքնեան Վարժա-  
րանին, Թէլ-Ապիաս (Սուրիա):
- Պ. Սարգիս Զիլինկիրեան, Մէկ օրինակ տարեկան, Պ. Մ. Արիկեանի, Նիւ-Եօրք:

## ՍՏԱՑԱՆՔ

**ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ** Իր կեանքը եւ գրականութիւնը, 190 էջնոց ձուկ հասար,  
Գրեց՝ Մկրտիչ Պարսամեան: Գին՝ Ֆրանսայի համար 25 ֆրանք, ուրիշ  
երկիրներու համար 1,50 տոլար:  
Գիմել՝ M. Barsamian, 121 Rue Marcadet, Paris (18e).

**ԱՐՈՆ**, Ամսագիր Կրօնական - Գրական - Բանասիրական: Պաշտօնաթերթ երուսաղէմի  
հայ սրբաբարբուծեան:

Հասցէ՝ Rédaction de la revue SION, Patriarcat Arménien, Yérusalem (Palestine)

**ԲԱԶՄԱՎԷՊ**, գրական-բանասիրական ամսաթերթ վենետիկի Միսիթարեան Միաբանութ.:  
Հասցէ՝ Rédaction de la Revue PAZMAVEB, St. Lazare, Venise (Italie).

**ԳՐՅԵԱԿ**, օրկան Հ. Յ. Դաշնակցութեան:

Հասցէ՝ Mlle. S. Agopian, 5 rue des Gobelins, Paris (13e)

**ՏՐՈՎԱԳԱՅԻ ՀՐԳԵԶԸ** (Կառակախաղ) Թրգմ. Յ. Պուճիգանեան:

Հասցէ՝ B. P. No. 718 Beyrouth (Liban).

**ՀԱՐԱՍՊՐԱՄ**, եգիպտահայ Ամսագիր: Հասցէ՝ 7 rue Ramli, le Caire (Egypte).

**ՐՈՒԺԱՆՔ**, Առողջապահական, գիտական եւ ընկերային Ամսագիր:

Հասցէ՝ Revue POUJANK, 126 Faub. St. Martin, Paris (10e).

**ԿԱՎՈՅ**, փարիզեան սրտկերազարդ երգիծաթերթ:

Հասցէ՝ 208 bis rue La Fayette, Paris (10e).

**LE FOYER**, Ֆրանսահայ երկշաբաթաթերթ:

Հասցէ՝ 208 bis rue Lafayette, Paris (10e).

**ԱՆԱՀԵՏ**, երկամսեայ գրական-բանասիրական հանդէս: Հասար 20 ֆրանք:

Հասցէ՝ ANAHIT, Revue arménienne, 9 rue Say, Paris (9e).

**ՋՈՒՐՔՆՈՅ**, Գրական - Գեղարուեստական հանդէսի 6 - 7 զոյգ Թիւր:

Հասցէ՝ H. Palouian, B. P. 50, Paris (10e).

**ՀԱՆԴԵՍ ԱՄՍՐԵԱՅ**, Հայագիտական Ուսումնական, Բանուար - Փետրուար Թիւերը:  
Հասցէ՝ Revue « Handes Amsoqya », VIENNE (Autriche), VII, Mechi-  
tharistengasse 4.

